

Արձանագրություն N5

2019 թվականի նոյեմբերի 6-ին ժամը 10:00-ին կայացած՝ եկամուտների վարչարարության բարեփոխումների հասարակական խորհրդի նիստի

1. ՀՀ ՊԵԿ ռիսկերի կառավարման և հարկային կարգապահության ծրագրերի վարչության պետ Ա. Սառիկյանը ներկայացրեց ՀՀ ՊԵԿ 2020-2024թթ. զարգացման և վարչարարության ռազմավարական ծրագրի նախագիծը: Մասնավորապես նշվեց, որ նախագիծը մշակվել է Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) աջակցությամբ՝ վերջինիս օգնությամբ մշակված եռամյա ռազմավարական ծրագրի նախագծի հիման վրա: Նշվեց, որ ծրագրի նախագիծը անցել է լայն քննարկումներ, տեղադրված է եղել e-draft համակարգում, քննարկվել է նաև Փ. Թադևոսյանի, մի շարք հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների և շահագրգիռ պետական մարմինների հետ: Վերջիններիս կողմից ներկայացված գրեթե բոլոր առաջարկները հաշվի են առնվել և նախագիծը ներկայացվել է Կառավարության քննարկմանը: Ծրագիրը քննարկվել է նաև ՀՀ վարչապետի մոտ: Ներկայացվեց, որ ներկայումս աշխատանքներ են տարվում Կառավարության հանձնարարականի շրջանակներում նախագծի վերաբերյալ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ներկայացված առաջարկությունների մասով, որոնք ամփոփելուց հետո նախագծի վերջնական տարբերակը կներկայացվի Կառավարությանը: Ամփոփ ներկայացվեց, թե ինչ է իրենից ներկայացնում ռազմավարական ծրագիրը: Մասնավորապես նշվեց, որ ծրագրում ներկայացված են ՊԵԿ տեսլականը և առաքելությունը, առանձնացված են 5 ռազմավարական նպատակներ, որոնցից առաջինը կառավարման համակարգերի կատարելագործմամբ հանրային ծառայությունների որակի բարձրացումն է, երկրորդը՝ հարկային և մաքսային հսկողության արդյունավետության բարձրացումը, երրորդը՝ առկա ենթակառուցվածքների արդիականացումը, ինչպես նաև ժամանակակից նոր ենթակառուցվածքների կառուցումը, չորրորդը՝ հանրային քննարկումների կամ հարկ վճարողների հետ շփման բարելավումը, հինգերորդը՝ մարդկային ռեսուրսների կառավարման արդի համակարգի ներդրումը՝ հարկային և մաքսային ծառայողների վարքագծային և մասնագիտական կարողությունների բարելավումը: Ռազմավարական ծրագրով ՊԵԿ-ն առաջիկա հինգ տարիների համար իր առջև դրել է 5 ռազմավարական զարգացման նպատակ, որոնք բաժանված են 9 ենթանպատակների և որոնց իրագործման համար նախատեսվում է իրականացնել 55 միջոցառում: Նշվեց նաև, որ ռազմավարությունը յուրաքանչյուր տարի թարմացվելու է՝ յուրաքանչյուր տարի ապահովվելով առաջիկա հինգ տարիների գործնական քայլերն ու զարգացման տեսլականը:

2. «Հարկ վճարողների պաշտպանություն» ՀԿ նախագահ Փ. Թադևոսյանի կողմից ներկայացվեց, որ պետական մարմինները, հիմնականում՝ ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեն և Պետական գույքի կառավարման վարչությունն իրենց կողմից մատուցվող ծառայությունների մասով էլեկտրոնային հաշվարկային փաստաթղթեր դուրս չեն գրում, ինչը խնդիրներ է առաջացնում շահութահարկ վճարող հարկ վճարողների համար՝ օրենսդրական առկա կարգավորումների շրջանակներում հնարավորություն չտալով հարկման նպատակով ծառայության ստացման գծով ծախսի ճանաչումը: Խորհրդի անդամների կողմից նշվեց նաև, որ էլեկտրոնային հաշվարկային փաստաթղթեր դուրս չեն գրվում նաև տեղական ինքնակառավարման մարմինների կողմից: Փ. Թադևոսյանն առաջարկեց բարձրացված հարցը կարգավորել օրենսգրքում համապատասխան փոփոխություն կատարելու միջոցով՝ սահմանելով, որ նշված մարմինների համար պարտադիր չէ էլեկտրոնային եղանակով հաշվարկային փաստաթղթերի դուրս գրումը և որ վերջիններիս կողմից մատուցվող ծառայությունների գծով ծախսերը կարող են փաստաթղթավորվել հաշվարկային փաստաթուղթ չհամարվող այլ փաստաթղթերով՝ այն կիրառելով հետադարձ ուժով: ՊԵԿ նախագահի տեղակալ Է. Հովհաննիսյանը հարցրեց արդյոք առկա են տվյալներ, թե ինչու նշված մարմինների կողմից դուրս չեն գրվում հաշվարկային փաստաթղթեր՝ արդյոք վերջիններս ունեն այդ հնարավորությունը և ուղղակի դուրս չեն գրում հաշվարկային փաստաթղթեր, թե այնուամենայնիվ առկա են որոշակի խնդիրներ: Վերջինիս վերաբերյալ Փ. Թադևոսյանը նշեց, որ գրություն է գրվել ՊԵԿ-ին, որով մասնավորապես բարձրացվել է այն հարցը, թե արդյոք նշված մարմինները պարտավոր են դուրս գրել հաշվարկային փաստաթղթեր, խնդրելով նման պարտավորության առկայության դեպքում ապահովել վերջիններիս կողմից հաշվարկային փաստաթղթերի դուրսգրումը: Ներկայացված հարցի վերաբերյալ ՊԵԿ նախագահի տեղակալ Ա. Մանուկյանը նշեց, որ բարձրացված հարցին պատասխանվել է, և մասնավորապես տեղեկացվել, որ պետական և տեղական ինքնակառավարման մարմինները նույնպես օրենսգրքով սահմանված դեպքերում և օրենսգրքով սահմանված կարգով պարտավոր են դուրս գրել հաշվարկային փաստաթղթեր:

Ներկայացված խնդիրը կարգավորելու նպատակով ՊԵԿ նախագահի տեղակալ Մ. Փաշայանն առաջարկեց, որ Պետական եկամուտների կոմիտեն այն գրավոր ձևակերպի և ներկայացնի ՀՀ վարչապետին կամ փոխվարչապետին՝ համապատասխան պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին էլեկտրոնային հաշվարկային փաստաթղթեր դուրս գրելու վերաբերյալ հանձնարարական տա-

լու նպատակով: Վերջինիս հետ համաձայնեց նաև ՊԵԿ նախագահի տեղակալ Է.Հովհաննիսյանը:

«Համագործակցության նոր ուղի-կիրթ գործարար» կրթական և գործարար կապերի զարգացման կենտրոն» ՀԿ ներկայացուցիչ Ա.Արամյանը կողմ էր հարցը ՀՀ հարկային օրենսգրքի 55-րդ հոդվածի 12-րդ մասում համապատասխան լրացում կատարելու միջոցով կարգավորելուն և այն հետադարձ ուժով կիրառելուն: Վերջինիս հետ համակարծիք էր նաև «Տնտեսական իրավունքի կենտրոն» ՀԿ ներկայացուցիչ Մ. Արիստակեսյանը: Նշվածի կապակցությամբ ՊԵԿ ՎՄԸՍ վարչության պետ Հ. Մուրադյանը նշեց, որ ՀՀ հարկային օրենսգրքում չպետք է կատարվեն փոփոխություններ՝ պայմանավորված որոշ հարկ վճարողների վարքագծով: Նշեց, որ ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված դրույթները հավասարաչափ կիրառելի են բոլորի նկատմամբ, և գտնում է, որ բարձրացված խնդիրը պետք է լուծվի համապատասխան պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին էլեկտրոնային հաշվարկային փաստաթղթեր դուրս գրել հորդորելու ճանապարհով:

Քննարկումների արդյունքում որոշվեց, որ ներկայացված խնդիրը նախ կփորձեն կարգավորել այն ՀՀ վարչապետին կամ փոխվարչապետին ներկայացնելու միջոցով, իսկ նշված ճանապարհով խնդիրը չլուծվելու դեպքում արդեն կքննարկվի այն ՀՀ հարկային օրենսգրքում համապատասխան փոփոխություն կատարելու միջոցով լուծելու հարցը:

«Աուդիտորներ Պալատ» ՀԿ ներկայացուցիչ Ն. Սարգսյանը նշեց, որ քննարկման ենթակա է նաև բեռնափոխադրման ծառայություններ մատուցող հարկ վճարողների կողմից հաշվարկային փաստաթղթերի դուրսգրման հարցը: Մասնավորապես նշեց, որ նման ծառայություններ մատուցող հարկ վճարողները դուրս են գրում համապատասխան հաշվարկային փաստաթղթեր, սակայն ծառայության մատուցումն ավարտելուց հետո ծառայություն ստացողները ջնջում են այդ հաշվարկային փաստաթղթերը: Առաջարկվեց արգելել հաշվարկային փաստաթղթերի ջնջելը: ՊԵԿ նախագահի տեղակալ Մ. Փաշայանը նշեց, որ բարձրացված խնդիրն արդիական է, վերջինիս անդրադարձել են նաև միջազգային փորձագետները, որոնց մոտ այնպիսի տպավորություն է, կարծես հարկ վճարողները հարկային հաշվարկները ներկայացնում, հաշվարկային փաստաթղթերը դուրս են գրում, ապա սկսում դրանք ճշտել, իսկ հաշվարկային փաստաթղթերն էլ ջնջել կամ ճշգրտել: Նշեց, որ միջազգային պրակտիկայում նման դեպքերի համար սահմանված են համապատասխան պատասխանատվության միջոցներ: Հ. Սահակյանն էլ նշեց, որ խնդիրը կարող է կարգավորվել ծառայություն ստացողներին՝ դիմացի կողմի համաձայնությամբ հաշվարկային փաստաթղթերը չեղարկելու հնարավորություն տալու միջոցով:

Քննարկումների արդյունքում որոշվեց նշված հարցը քննարկել առաջիկա նիստի շրջանակներում:

Հայաստանի հաշվապահների և աուդիտորների ասոցիացիացիայի ներկայացուցիչ Ա. Հարությունյանը նշեց նաև, որ օրենսգրքի 55-րդ հոդվածի 12-րդ մասով սահմանված է, որ վճարահաշվարկային համակարգի կամ վարկային կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայությունների գծով ծախսերը կարող են փաստաթղթավորվել հաշվարկային փաստաթուղթ չհամարվող այլ փաստաթղթերով: Ստացվում է, որ բանկը լիզինգի ծառայություն մատուցելով դուրս չի գրում հաշվարկային փաստաթուղթ՝ հղում անելով օրենսգրքի 55-րդ հոդվածի 12-րդ մասին, իսկ օրինակ ներդրումային կազմակերպությունը նույն ծառայությունը մատուցելիս պարտավոր է դուրս գրել հաշվարկային փաստաթուղթ: «Քեյ-փի-էմ-ջի Արմենիա» ՓԲԸ ներկայացուցիչ Ն. Ներսիսյանն էլ նշեց, որ վճարահաշվարկային համակարգի առանձնահատկությունները հաշվի առնելով դժվար է տարանջատել, թե որ ծառայություններն են վճարահաշվարկային և որոնք ոչ, և տվյալ պարագայում իր կարծիքով խնդիր չէ, երբ վերջիններս հղում են անում օրենսգրքի 55-րդ հոդվածի 12-րդ մասին՝ մատուցվող ծառայությունները փաստաթղթավորելով հաշվարկային փաստաթուղթ չհամարվող այլ փաստաթղթերով: Վերջինիս կապակցությամբ Հ. Յանիկյանը նշեց, որ բարձրացված հարցը դուրս է ՊԵԿ և Ֆինանսների նախարարության լիազորությունների շրջանակից, այն գտնվում է Կենտրոնական բանկի իրավասությունների շրջանակում՝ տեղեկացնելով, որ ԿԲ կողմից տրված պարզաբանման մեջ հստակ սահմանվել են, թե որ ծառայություններն են համարվում վճարահաշվարկային:

3. Է. Բադալյանի կողմից ներկայացվեց, որ ՀՀ հարկային օրենսգրքի 381-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված է, որ կանխիկ դրամով կամ վճարային քարտերի կամ վճարային տեխնոլոգիաների հիման վրա կիրառվող այլ վճարային գործիքների միջոցով իրականացվող դրամական հաշվարկների համար նույն գլխին համապատասխան հսկիչ դրամարկղային մեքենայի կիրառությունը պարտադիր չլինելու դեպքում տեղադրված և կիրառվող հսկիչ դրամարկղային մեքենայի միջոցով արձանագրված շրջանառությունը հիմք չէ հարկերի հաշվարկման համար, իսկ այդ հսկիչ դրամարկղային մեքենան հարկային մարմնում գրանցումից հանվում է (գրանցված լինելու դեպքում) Կառավարության սահմանած կարգով: Նույն հոդվածի 7-րդ մասով սահմանված է, որ հսկիչ դրամարկղային մեքենային և ցանցային կապի միջոցներին ներկայացվող տեխնիկական պահանջները, հսկիչ դրամարկղային մեքենան հարկային մարմնում գրանցման և գրանցումից հանման կարգը, հսկիչ դրամարկղային մեքենայի կիրառության կանոնները հաստատում է Կառավարությունը:

Նշեց, որ նշված հոդվածով ՀԴՄ արգելափակման դրույթներ նախատեսված չեն, ավելին հսկողություն իրականացնող մարմնին ՀԴՄ արգելափակելու լիազորություններ տրված չեն: ՀԴՄ արգելափակման վերաբերյալ դրույթ նախատեսված է ՀՀ կառավարության 05.10.2017թ. N1318-Ն որոշման հավելված 2-ի 14-րդ կետում: Սակայն, հաշվի առնելով այն, որ նշված որոշումն ընդունվել է ՀՀ հարկային օրենսգրքի 381-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված նպատակով, ապա ըստ էության, այն չի կարող կարգավորել ՀԴՄ-ի հարկային մարմնում գրանցումից հանելու (գրանցված լինելու դեպքում) հարաբերությունները:

Նշվեց նաև, որ ՀՀ հարկային օրենսգրքի 380-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված են գործունեության այն տեսակները, որոնց մասով ՀԴՄ կիրառությունը պարտադիր չէ: Քիչ չեն այն դեպքերը, երբ գործունեության որոշ տեսակներ, ներառված չլինելով նշված մասով սահմանված գործունեության տեսակների ցանկում, այնուամենայնիվ ՊԵԿ-ի կողմից անտեսվում են օրենքով սահմանված հիմքերը և արգելափակվում են ՀԴՄ-ները:

Նշեց, որ ըստ էության, ՊԵԿ գործողությունները թերևս հիմնավորվում են այն հանգամանքով, որ երբեմն հարկ վճարողներն իրենց մեծածախ իրացումները հաշվարկային էլեկտրոնային փաստաթղթերով փաստաթղթավորելու փոխարեն նախընտրում են ՀԴՄ-ի կիրառումը, այսպիսով ՊԵԿ-ի համար անտեսանելի դարձնելով գնորդի վերաբերյալ տեղեկատվությունը: Եթե ընդունենք այս խնդրի առկայությունը, այնուամենայնիվ խնդիրն իրացնողների ստվերայնությունը չէ, այլ գնորդների ստվերում գործելու շահագրգռվածությունը: Տվյալ դեպքում ստացվում է մի իրավիճակ, որ չկարողանալով վերահսկել մեծածախ գնորդների հետագա իրացումները, ՊԵԿ-ը, ըստ էության, պատժում է հարկերը ամբողջ ծավալով հայտարարագրելու պատրաստակամ հարկ վճարողներին՝ գնորդները դադարում են գնումներ իրականացնել հաշվարկային էլեկտրոնային փաստաթղթերով ապրանք վաճառողներից:

Նշվեց նաև, որ որոշ դեպքերում մեծածախ իրացնողներին ՀԴՄ գրանցումը մերժելու կամ գրանցված ՀԴՄ-ները արգելափակելու պատճառով որոշ հարկ վճարողներ ստիպված են լինում իրենց իրացումները փաստացի գնորդների փոխարեն փաստաթղթավորել մեծ շրջանառություն ունեցող՝ հարկման ընդհանուր համակարգում գործող հարկ վճարողների անունով, արդյունքում՝ հնարավորություն տալով վերջիններիս պակասեցնել ինչպես ԱԱՀ-ի գումարները, այնպես էլ նվազեցնել շահութահարկը: Նման իրավիճակում, ըստ էության, ՊԵԿ-ի բարի ցանկությունները ոչ միայն չեն լուծում խնդիրը, այլև ճիշտ հակառակ ազդեցությունն են ունենում:

Բարձրացված հարցի վերաբերյալ ՀՀ ՊԵԿ ՎՄԸՍ վարչության պետ Հ. Մուրադյանը նշեց, որ ներկայումս քննարկվում են ՀԴՄ-ների գրանցման, կիրառման

սահմանափակումների, ՀԴՄ խախտումների համար պատասխանատվության չափերի և պարբերականության մասով փոփոխություններ կատարելու հարցերը, որոնց շրջանակներում մասնավորապես նախատեսվում է վերացնել ՀԴՄ-ների տեղադրման մասով օրենսգրքի 381-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված սահմանափակումները կամ ընդլայնել կիրառման շրջանակը: Միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքում, ներկայումս նախատեսվում է էլեկտրոնային առևտրի շրջանակներում ներդնել վիրտուալ ՀԴՄ կտրոնների տրամադրման համակարգ՝ ֆիսկալ շրջանառությունը ֆիքսելու նպատակով նախատեսելով նշված տեղեկատվությունը հաղորդագրության տեսքով ՊԵԿ փոխանցելու համապատասխան մեխանիզմներ: Նշվեց նաև, որ նախատեսվող փոփոխությունները բավականին ռիսկային են, սակայն այդ փոփոխությունները կատարելու դեպքում բարձրացված հարցերն ինքնին կլուծվեն: ՊԵԿ նախագահի տեղակալ Է. Հովհաննիսյանը նույնպես նշեց, որ առաջարկվող փոփոխությունները ռիսկային են՝ հաշվի առնելով ներկա բիզնես կառուցվածքը: Նշեց, որ իրենց կողմից ողջունվում են բոլոր այն հարկ վճարողները, ովքեր ՀԴՄ-ն կիրառում են շրջանառության ֆիքսման նպատակով և որոնց կողմից ՀԴՄ-ներով և հաշվարկային փաստաթղթերով ապրանքների իրացման գները նույնական են, սակայն ներկա դրությամբ նման փոփոխությունների գնալը բավական ռիսկային է, և որ նման փոփոխություններ կատարելու համար պետք է լինել չափազանց լավատես: Արդյունքում, Հ. Մուրադյանի կողմից առաջարկվեց ՀՀ ֆինանսների նախարարության հետ համատեղ աշխատանքների արդյունքում՝ նշված փոփոխություններն առավել հստակեցնելու, ռիսկերի չեզոքացման առումով որոշակի կրիտերիաներ սահմանելուց հետո աշխատանքային կարգով կամ խորհրդի նիստի շրջանակներում կազմակերպել քննարկում:

4. Փ. Թադևոսյանը ներկայացրեց, որ ՀՀ հարկային օրենսգրքի 156-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հարկային գործակալները նոր աշխատողին (բացառությամբ ՀՀ-ում բնակության իրավունք (կացության կարգավիճակ) չունեցող օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող ֆիզիկական անձանց) աշխատանքի ընդունելուց հետո, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ աշխատողի կողմից աշխատանքը փաստացի սկսելու օրվան նախորդող օրվա ավարտը, իսկ աշխատանքի ընդունելու օրն աշխատանքը փաստացի սկսելու դեպքում՝ մինչև աշխատանքի ընդունելու օրվա ժամը 14:00-ն, հարկային մարմին են ներկայացնում նոր աշխատողի գրանցման հայտ, որտեղ ներառվում են անհատական տեղեկություններ (անունը, ազգանունը, հայրանունը, բնակության (հաշվառման) վայրը, հանրային

ծառայությունների համարանիշը (սոցիալական քարտի համարը), ինչպես նաև օրենքով սահմանված այլ տեղեկություններ:

Նշվեց, որ գործունեության որոշ ոլորտներում երբեմն անհրաժեշտություն է առաջանում մի քանի ժամով, մեկ կամ երկու օրով կոնկրետ աշխատանքի իրականացման համար ներգրավել աշխատողներ: Շատ դեպքերում հնարավոր չի լինում նախօրոք կանխատեսել նման իրավիճակները, հետևաբար՝ նման աշխատակիցների ներգրավման համար անհրաժեշտություն է առաջանում ներկայացնել գրանցման հայտ: Իրավիճակը խնդրահարույց է դառնում բոլոր այն դեպքերում, երբ նման աշխատանքներում ներգրավվող անձինք ՀՀ քաղաքացիներ չեն և միաժամանակ չունեն ՀԾՀ, ինչը անհնար է դարձնում այդ անձանց համար գրանցման հայտեր ներկայացնելը:

Գործունեության որոշ ոլորտներում էլ մասնագիտական նրբություններով պայմանավորված անհրաժեշտություն է առաջանում, որպեսզի աշխատողները մեկ կամ երկու օր ծանոթանան աշխատանքին, որից հետո միայն երկկողմ համաձայնության դեպքում անցնեն աշխատանքի: Այս դեպքում էլ գրանցման հայտի ներկայացումը, ըստ էության, նշանակում է վարձու աշխատողի գրանցում, որը իրականության հետ առնչություն չունի:

Քիչ չեն նաև դեպքերը, երբ մասնագիտական հմտություններ ձեռք բերելու կամ հանրօգուտ հասարակական աշխատանքով զբաղվելու շրջանակներում անձինք ներգրավվում են կոնկրետ որևէ ծրագրով չվարձատրվող գործառույթներ իրականացնելու համար: Որոշ դեպքերում էլ որոշակի աշխատանք կատարելու համար անհրաժեշտություն է առաջանում ներգրավել ՀՀ-ից դուրս գտնվող, ՀՀ քաղաքացի չհամարվող անձանց: Այս դեպքում ևս անհնար է այդ անձանց մասով ներկայացնել գրանցման հայտ:

Առաջարկվեց բոլոր վերը նշված դեպքերի համար նախատեսել գրանցման հայտերի ներկայացման պարզեցված կարգ:

Մասնավորապես, առաջարկվեց կարճաժամկետ աշխատանքներ իրականացնելու նպատակով ներգրավված աշխատողների համար գրանցման հայտերը ներկայացնել սոցիալական քարտի տվյալներով, փորձաշրջան անցնող անձանց համար նույնպես ներկայացնել գրանցման հայտ՝ այդ փաստի վերաբերյալ համապատասխան նշումով, ինչը կարող է դրականորեն ազդել նաև ստուգումների գործընթացի վրա:

Հայաստանի ՓՄՁ հաշվապահների ասոցիացիայի ներկայացուցչի կողմից ներկայացվեց կազմակերպության տնօրենի համար գրանցման հայտը ու ներկայացնելու համար վարչական պատասխանատվության կիրառման հարցը, ինչի վերաբերյալ

ՊԵԿ նախագահի տեղակալ Է. Հովհաննիսյանը նշեց, որ վերջինիս մասով պատասխանատվություն չի կիրառվում:

Է. Բադալյանն առաջարկեց վերանայել գրանցման հայտերի ներկայացման համար սահմանված ժամկետները: Ա. Արամյանն էլ հարցրեց արդյոք առկա է տեղեկատվություն՝ գրանցման հայտերի ներկայացման համար սահմանված ժամկետների արդյունավետության վերաբերյալ, թե վերջինիս արդյունքում արդյոք ավելացել են եկամտային հարկի գծով մուտքերը, ինչի վերաբերյալ Հ. Մուրադյանը նշեց, որ գրանցման հայտերի ներկայացման համար ժամկետները սահմանվել են արդյունավետ հարկային վարչարարության իրականացման, և ոչ թե եկամտային հարկի գծով լրացուցիչ մուտքեր ապահովելու նպատակով:

Ներկայացված հարցի շուրջ ծավալված քննարկումների արդյունքում Փ. Թադևոսյանն առաջարկեց նշված հարցի հետագա քննարկման նպատակով խորհրդի անդամներն իրենց առաջարկությունները ներկայացնեն գրավոր ձևով:

5. Փ. Թադևոսյանի կողմից ներկայացվեց օրակարգի 8-րդ հարցը՝ կապված «Հարկատու 3» համակարգում տույժերի հաշվարկման կարգի հետ: Մասնավորապես նշվեց, որ օրինակ, երբ ներմուծման ԱԱՀ-ի վճարման վերջնաժամկետը մինչև ներմուծման ամսվան հաջորդող ամսվա 20-ն է, հարկ վճարողը ներմուծման հարկային հայտարարագիրը ներկայացնում է վերջնաժամկետից շուտ, հաշվարկով արտացոլված հարկի գումարը մարվում է միասնական հաշվին առկա գումարների հաշվին, այնուհետև այլ հարկերի գծով պարտավորությունների առկայության դեպքում, երբ վերջիններիս վճարման համար սահմանված են ավելի վաղ ժամկետներ, հարկ վճարողը՝ առավել վաղ վճարման վերջնաժամկետով հարկերի մասով տույժերի չհաշվարկման նպատակով ներկայացնում է ճշտված հայտարարագիր՝ զրոյացնելով ներմուծման ԱԱՀ-ի պարտավորությունը, ապա մինչև ներմուծման ԱԱՀ-ի վճարման վերջնաժամկետը ներկայացնում է ճշտված հայտարարագիր՝ վերականգնելով նախկինում զրոյացրած պարտավորությունը և նույն ժամկետում վճարում հաշվարկված ներմուծման ԱԱՀ-ի գումարը: Ներկայացվեց, որ այն դեպքում, երբ ՀՀ հարկային օրենսգրքով տույժը հաշվարկվում է հարկի գումարը սահմանված ժամկետում չվճարելու համար՝ սահմանված ժամկետից ուշ վճարելու յուրաքանչյուր օրվա համար, միասնական հաշվի համակարգում տույժերի հաշվարկը կատարվում է հարկերի վճարման համար սահմանված ժամկետից շուտ, այն դեպքում, երբ սահմանված ժամկետում չվճարված հարկ չկա: Վերջինիս վերաբերյալ Մ. Փաշայանը նշեց, որ ներկայացված հարցը պետք է դիտարկել 4 պրակտիկ օրինակների վրա՝ խնդրելով ՊԵԿ տեղեկատվական համակարգերի փոփոխությունների կառավարման և ազ-

դեցությունների գնահատման բաժնի պետ Լ. Այվազյանին ներկայացնել այդ օրինակները:

Լ. Այվազյանը նշեց, որ նշված խնդիրը պետք է դիտարկել բազմակողմանի, մասնավորապես՝ խնդիր է առաջանում նաև այն դեպքում, երբ հարկի վճարման համար սահմանված ժամկետից հետո է ներկայացվում ճշտված հաշվարկ՝ զրոյացնելով նախկինում հաշվարկված պարտավորությունը, այնուհետև նորից ներկայացվում է ճշտված հաշվարկ՝ վերականգնելով զրոյացված պարտավորությունը: Նշեց, որ տվյալ դեպքում տույժերի հաշվարկը օրենսգրքով սահմանված կարգով կատարվելու դեպքում՝ տույժերը կհաշվարկվեն հարկի վճարման համար սահմանված վերջնաժամկետից, այն դեպքում, երբ հարկ վճարողը վերջնաժամկետում կատարել էր իր հարկային պարտավորությունը: Նշեց, որ նշված հարցերը հաշվի առնելով, տույժերի հաշվարկման հարցը դրվել է ընդհանուր քննարկման և ընդհանուր սկզբունքից ելնելով որոշվել է, որ այն դեպքերում, երբ որևէ հարկատեսակի մասով (բացառությամբ ԱԱՀ-ի և ակցիզային հարկի) միասնական հաշվին վերադարձվում է գումար և եթե հարկ վճարողը հետո ներկայացնում է ճշտված հաշվարկ, գումարի վերադարձման օրվա դրությամբ ինչքանով որ չի բավարարում վերադարձման ենթակա գումարը, այդքան մասով նորից առաջադրվում է պարտավորություն և տույժերի հաշվարկը սկսվում է վերադարձի օրվանից: Մ. Փաշայանը նշեց, որ նշված լուծումն իր կարծիքով հոգուտ հարկ վճարողների է:

Լ. Այվազյանը նաև նշեց, որ շատ հարկ վճարողներ ներկայացնում են շահութահարկի զրոյական հաշվարկներ, որի արդյունքում շահութահարկի կանխավճարները մուտքագրվում են միասնական հաշվին և այդ գումարից մարվում են վերջիններիս բոլոր հարկային պարտավորությունները, ոչ մի հարկատեսակի գծով տույժեր չեն հաշվարկվում, այնուհետև շահութահարկի վճարման վերջնաժամկետից 2 օր առաջ ներկայացվում են ճշտված հաշվարկներ՝ ներկայացնելով արդեն իրական պատկերը և տվյալ պարագայում, ըստ առաջարկվող մոտեցման, տույժերը պետք է հաշվարկվեն հարկի վճարման համար սահմանված վերջնաժամկետից:

Փ. Թադևոսյանը նշեց, որ անկախ այն հանգամանքից թե ինչ նպատակով է տույժերի հաշվարկը կատարվում ներկայացված կարգով, այնուամենայնիվ պետք է ամեն ինչ անել օրենսգրքով սահմանված կարգով և եթե օրենսգրքով սահմանված է, որ տույժերը հաշվարկվում են հարկերը սահմանված ժամկետում չվճարելու համար՝ կետանցված յուրաքանչյուր օրվա համար, ապա հենց այդպես էլ պետք է կատարվի տույժերի հաշվարկը: Մ. Փաշայանը նշեց, որ տույժերի հաշվարկման կարգի առումով օրենսգրքում առկա է բաց և այդ բացը փակելու և առկա խնդիրներին լուծում տալու, իրավիճակային բոլոր դեպքերի համար համապատասխան կարգավորումներ

նախատեսելու նպատակով է սահմանվել տույժերի հաշվարկման ներկայացված կարգը: Նշեց նաև, որ հաշվի առնելով տույժերի հաշվարկման առումով օրենսգրքում առկա բացը և տույժերի հաշվարկման մեխանիզմի սահմանման անհրաժեշտությունը, խնդրի կարգավորման նպատակով առկա է նաև ՊԵԿ նախագահի հանձնարարական, որում մանրամասն ներկայացված են առկա խնդիրներն ու դրանց լուծման ուղիները: Առաջարկեց նաև խորհրդի անդամներից կազմել մասնագիտական խումբ, կոնկրետ օրինակի վրա դիտարկել և ներկայացնել բոլոր այն դեպքերը, որոնց մասով տույժերի հաշվարկման համապատասխան կարգավորումներ օրենսգրքով սահմանված չեն, որից հետո միայն քննարկել՝ տույժերը հարկերի վճարման համար սահմանված վերջնաժամկետից սկսած հաշվարկելու հարցը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ բարձրացված խնդրի լուծման նպատակով որևէ միասնական դիրքորոշում չձևավորվեց՝ որոշվեց այն քննարկել աշխատանքային կարգով:

6. Փ. Թադևոսյանի կողմից ներկայացվեց ոչ ռեզիդենտ հարկ վճարողներին և ֆիզիկական անձանց թղթային եղանակով հաշվարկ ներկայացնելու հնարավորություն տալու վերաբերյալ առաջարկությունը: Ներկայացվեց, որ ֆիզիկական անձանց, ինչպես նաև ոչ ռեզիդենտների համար որոշակի դժվարություններ են առաջացնում հարկային մարմնում հաշվառվելը, ՀՎՀՀ ստանալը: Հաճախ ոչ ռեզիդենտները չեն ցանկանում որպես հարկ վճարող գրանցվել ՀՀ-ում, պատրաստաակամ են վճարել հարկեր, սակայն պարզեցված ընթացակարգով: Հ. Սահակյանը համաձայնեց Փ. Թադևոսյանի հետ՝ նշելով, որ ֆիզիկական անձանց մասով կարելի է նախատեսել հարկերը որևէ հավելվածի միջոցով հաշվարկելու և վճարելու կարգավորումներ, հատկապես ներկա ժամանակաշրջանում, երբ ամեն ինչ թվայնացվում է: Ներկայացված առաջարկության վերաբերյալ Հ. Մուրադյանը նշեց, որ ՊԵԿ կողմից նախաձեռնված փոփոխությունների շրջանակում, նախատեսվում է նաև փոփոխություններ կատարել էլեկտրոնային ծառայությունների մասով, որի նպատակով կատարվել է նաև միջազգային փորձի ուսումնասիրություն, այդ թվում՝ ուսումնասիրվել է ՌԴ փորձը: Նշվեց, որ ոչ ռեզիդենտի մոտ էլեկտրոնային ծառայությունների մասով ԱԱՀ-ի պարտավորություն առաջանալու դեպքում նախատեսվում է Կառավարության որոշմամբ սահմանել պարզ հաշվետվական կամ տեղեկությունների ներկայացման ձև, որով ցույց է տրվելու ԱԱՀ-ի գծով պարտավորությունը, այն հաշվառվելու է ԱՀԲ-ում և էլեկտրոնային եղանակով հարկ վճարողին տրվելու է ՀՎՀՀ: Նախատեսվում է նաև ՀՀ ֆինանսների նախարարության և Կենտրոնական բանկի հետ համատեղ քննարկումների արդյունքում դյուրինացնել նաև հարկերի վճարումը: Նշեց, որ նշվածը կիրառվում է ՌԴ-ում և նախատեսվում է վերջինս ՀՀ-ում կիրառելու նպա-

տակով անհրաժեշտ կարգավորումները սահմանել ՀՀ կառավարության որոշմամբ: Ինչ վերաբերում է ֆիզիկական անձանց կողմից եկամտային հարկի հաշվարկների ներկայացմանը, Հ. Մուրադյանը նշեց, որ եկամտային հարկի հաշվարկները այլ ձևով ներկայացնելու հարցին անդրադառնալու են ֆիզիկական անձանց կողմից եկամուտների համատարած հայտարարագրման շրջանակներում:

Փ. Թադևոսյանն առաջարկեց քննարկել բարձրացված խնդրի ընթացիկ լուծման տարբերակները, մասնավորապես՝ հաշվարկները թղթային եղանակով կամ պարզեցված ընթացակարգով՝ առանց ՀՎՀՀ-ի, սոցիալական քարտի տվյալներով ներկայացնելու հնարավորությունը: Հ. Մուրադյանը նշեց, որ ՀՀ հարկային օրենսգրքով նման հնարավորություն սահմանված չէ, ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացուցիչ Օ. Ալավերդյանն էլ նշեց, թե նշված պարագայում հարկային մարմինն ինչպես պետք է հաշվառի հարկային պարտավորությունները, և մյուս կողմից Ֆինանսների նախարարությունը ինչպես պետք է տեսնի այդ պարտավորությունները, ինչպես պետք է կատարվի հարկ վճարողների իդենտիֆիկացումը: Միաժամանակ, հարցրեց նաև, թե ինչն է խնդիրը ոչ ռեզիդենտների կողմից էլեկտրոնային եղանակով ՀՎՀՀ չստանալու պատճառը, որին ի պատասխան Փ. Թադևոսյանը պատասխանեց, որ պարզապես նման ցանկություն չունեն, ինչը խորհրդի անդամների կողմից միանշանակ չընդունվեց:

7. Փ. Թադևոսյանի կողմից ներկայացվեց, որ կարծես թե կա համաձայնություն դրոշմապիտակների համար նախատեսված պատասխանատվության վերանայման առումով: Նշեց, որ խնդրի լուծման մասով ձևավորվել է որոշակի միասնական մոտեցում, միաժամանակ, խորհրդի անդամներին առաջարկեց ներկայացնել իրենց առաջարկները՝ նախատեսվող փոփոխությունների համատեքստում դրանք նույնպես հաշվի առնելու համար:

8. Փ. Թադևոսյանը ներկայացրեց հանրային սննդի ոլորտում գործունեություն իրականացնող շրջանառության հարկ վճարողների այլ գործունեությունից ստացվող եկամուտների նկատմամբ շրջանառության հարկը 20% դրույքաչափով չհաշվարկելու հարցը, մասնավորապես՝ հյուրանոցների, հանգստյան տների, առողջարանների մասով՝ 2018 և 2019 թվականների համար:

Նշված հարցի կապակցությամբ ՊԵԿ նախագահի տեղակալ Ա. Մանուկյանը նշեց, որ բարձրացված հարցը պատրաստակամ է քննարկել միայն հյուրանոցների մասով, այն դեպքում, երբ հյուրանոցային ծառայությունների արժեքը ներառում է սննդի ապահովման ծառայությունների արժեքը, հակառակ դեպքում պետք է բացառություն նախատեսվի նաև մասնավոր դպրոցների համար, որոնք ունեն ճաշարան, հոսթելների և մի շարք այլ դեպքերի համար:

ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացուցիչ Օ. Ալավերդյանն էլ նշեց, որ հանրային սննդի ոլորտում գործունեություն իրականացնող շրջանառության հարկ վճարողների՝ Տնտեսական գործունեության դասակարգչի «Հանրային սննդի կազմակերպում» հատվածում չներառվող՝ այլ ակտիվների օտարումից, ինչպես նաև այլ գործունեությունից ստացվող եկամուտների մասով շրջանառության հարկի 20% դրույքաչափի սահմանմամբ նպատակ է դրվել կանխելու հարկ վճարողների կողմից հնարավոր չարաշահումները, հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեության հետ չառնչվող հարկվող օբյեկտներից ձևավորվող հարկման բազաները շրջանառության հարկի համակարգին վերագրելու և դրանով իսկ այդ գործունեություններին վերաբերող հարկման բազաները օրենսգրքով սահմանված շրջանառության հարկի դրույքաչափերով հարկելու ռիսկերը: Նման պարագայում դժվար է բարձրացված խնդիրը լուծել՝ ապահովելով նաև այն նպատակի իրագործումը, որը դրվել է օրենսդրական նման կարգավորումների սահմանման հիմքում: Նշեց նաև, որ առաջարկվում է տալ պաշտոնական պարզաբանում կամ օրենսգրքում կատարել համապատասխան փոփոխություն, ընդունել որ 2 տարի օրենսգիրքը սխալ է կիրառվել, այն դեպքում, երբ նշված օրենսդրական կարգավորումներն ունեցել են կոնկետ նպատակադրում:

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Փ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ